ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/126

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Ադունցի (պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ թիվ 03Ա 075008),

«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 20.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.05.2021թ. թիվ 26/26-1/7576-2021 գրությամբ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 05.05.2021թ. թիվ 01/61-10312 գրության հիման վրա 13.05.2021թ. թիվ 26/26-1/7576-2021 գրությամբ նախաձեռնել է «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/126 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 21.05.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, Ընկերության տնօրենը և լիազորված ներկայացուցիչը մասնակցել են նիստին և հայտնել հետևյալը.

«Քանի որ հայտերի բացման նիստը կայացել է 28.04.2021թ. և դրանից հետո շտկում կատարելու ծանուցում չեն ստացել, չեն ակնկալել, որ հետագայում կարող են ծանուցվել և ուշադիր չեն եղել, քանի որ 28.04.2021թ. չեն ծանուցվել հետագայում հետևողական չեն եղել»:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.05.2021թ. թիվ 01/61-10312 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/49» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ ներկայացված հայտում բացակայել է հայտի ապահովումը:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով, ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի

կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/126 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 21.05.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/126 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/126 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/49» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է 1-ին չափաբաժնի մասով հայտի ապահովումը:

3. 28.04.2021թ. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը կասեցնելու և Ընկերությանը մեկ աշխատանքային օր ժամկետ տրամադրելու վերաբերյալ՝ առաջարկելով շտկել հայտում առկա անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.05.2021թ. թիվ 26/26-1/7576-2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 05.05.2021թ. թիվ 01/61-10312 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ

կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը <u>նույն օրը</u> դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/49» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է 1-ին չափաբաժնի մասով հայտի ապահովումը:

28.04.2021թ. հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել նիստը կասեցնելու և Ընկերությանը մեկ աշխատանքային օր ժամկետ տրամադրելու վերաբերյալ՝ առաջարկելով շտկել հայտում առկա անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Անդրադառնալով Ընկերության ներկայացուցչի կողմից նիստի ընթացքում վկայակոչված այն հանգամանքին, որ 28.04.2021թ. հայտերի բացման և գնահատման նիստից հետո շտկում կատարելու վերաբերյալ չծանուցվելու պայմաններում չեն ակնկալել, որ հետագայում կարող են ծանուցվել և ուշադիր չեն եղել, քանի որ 28.04.2021թ. չեն ծանուցվել, հետագայում հետևողական չեն եղել՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է</u>***

մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում կրում է նույն***

<u>օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով մասնակցին ծանուցելու պարտավորություն</u>:

Ընդ որում Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ

իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Մինչդեռ Ընթացակարգին առնչվող փաստաթղթերի, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***28.04.2021թ.*** նիստի ընթացքում արձանագրել է Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունը, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերությանը ծանուցել է ***29.04.2021թ., այսինքն՝ վերը շարադրված իրավական նորմերով սահմանված ժամկետների և իրավական որոշակիության սկզբունքների պահպանման պահանջների խախտմամբ, որպիսի պայմաններում Ընկերությունը չի ունեցել որևէ իրավական ակնկալիք առ այն, որ իրեն կարող է ներկայացվել շտկում կատարելու պահանջ և արդյունքում վերջինս զրկվել է օրենքով իրեն վերապահված իրավունքն իրացնելու, այն է՝ մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը անհամապատասխանությունը շտկելու հնարավորությունից, և արդյունքում հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունները մեկնաբանվել են ի վնաս Ընկերության և հանգեցրել վերջինիս հայտն անբավարար գնահատելուն:***

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.05.2021թ. թիվ 26/26-1/7576-2021 գրությամբ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**